

## ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

### «ԱՍՏՈՒՄԱՄԱՄՈՐ ԵՕԹ ՎԵՐՔԸ» ԿՏԱՀ

«Իսկ քո հոգու միջով ել սուր պիտի  
անցնի, որպէս զի բազում սրտերի  
խորհուրդներ յայտնի դառնան»:  
Ղուկաս, թ. յ,

Քրիստոնեայ աշխարհի ամենից պաշտելի ու սիրուած սրբերից մէկի Մարիամ Աստուածածնի անունը յանախ է յիշում Տիրոջն ուղղուած աղօթքներում՝ որպէս քարեխոս, որի քարեգքութեանն ու կարեկցանեին ապաւնելով՝ մարդիկ հոգու խորհում միշտ կրում են նրա լուսաւոր կերպարը եւ այն համարում կատարելութեան օրինակ:

Քրիստոնէական գրականութեան մէջ առանձնանում է Աստուածամօր կեանեի պատմութիւնը, որն ամբողջանում է Նոր Կտակարանի, պարականն աւետարանների եւ եկեղեցու հայրերի գրաւոր ժառանգութեան էջերում, ոգեշնչման աղրիւր հանդիսանալով արուեստի բազմաթիւ գործերի համար: Աստուածամօր կերպարը, քրիստոնէական մշակոյթի վաղ շրջանից սկսած, իր ուրոյն տեղն է գրաւում Տէրունական պատկերաշարում: Բացի այդ, ստեղծուել են Աստուածամօր պատկերով առանձին գործեր, ուր նաև ներկայանում է որպէս սրբուհի, քարեխոս, խնդրակատար, հովանաւոր, ստնտու, քագուհի, Քրիստոսի չարչարանների վկան ու կարեկիցը: Քրիստոնէական մշակոյթի ոլորտում կանոնակարգուել են Աստուածամօր պատկերագրական տարրեր տիպեր, որոնց հետաքրքիր օրինակներ է տուել նաև հայ միջնադարեան արուեստը:

Հայաստանում Աստուածամօր առաջին պատկերները պահպանուել են

4-օրդ դդ. քանդակագարդ յուշակորողների վրայ եւ եկեղեցիների պատերի քանդակներում, հետագայում նաև ձեռագիր մատեանների նկարագարդումներում, որմնանկարչութեան բազմաթիւ՝ գործերում:

Ուշագրաւ է, որ հայ նկարիչները աւետարանական սիմենները կերպաւորելիս, երբեմն խախտելով տուեալ յօրինուածքի կանոնիկ կառուցուածքը, ստեղծել են բաւական ինքնատիպ գործեր: Այս իմաստով մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Հայաստանի Ազգային պատկերասրահի հայ եկեղեցական գեղանկարչութեան հաւաքածոյի լաւագոյն գործերից մէկը 17-րդ դ. անյայտ հայ նկարչի «Աստուածամօր եօթ վերքը» կտաւը:

Նկարի կենտրոնում, ճարտարապետական հաստուածներով բնապատկերի ֆոնի վրայ պատկերուած է Աստուածամայրը, գոգին խաչից իջեցուած Քրիստոսի անկենդան մարմինը: Նկարի վերեւի մատու բոլորաձեւ տեղադրուած եօթ սրերը ուղղուած են Աստուածամօր սրտին, որոնց բռնակների մօտ մէկական շրջանակ է թեմատիկ պատկերով: Աստուածամօր թիկունից բարձրանում է լայն խաչափայտը, իսկ ոտքերի առջեւ գետնին Քրիստոսի չարչարանքի գործիքներն են: Նկարի ներքեւի եզրին առանձնանում է հետեւեալ մակագրութիւնը՝ «Յիշատակ է պատկերս Աստապատցի Ցովսէի վարդապետէն ի դուռն սր. էջմիածնի թ. ՈՃ...»:

Նկարի հեղինակի, յիշատակային գրութեան թուականի, նուիրատու Յովսէփ վարդապետի մասին որոշ նշգրտուած տեղեկութիւնները կան Ա. Առաքելեանի «Տիրամօր եօթ Վերքը» կտաւի հեղինակի հարցի շուրջ» յօդուածում («Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1981, թիւ 5): Յովսէփ վարդապետը եղել է Նախիջեւան գաւառի Աստուածատի Սր. Ստեփանոս եկեղեցու առաջնորդը, որի բազմաբնոյք գործունելութեան մասին ձեռագրերում յիշատակութիւններ են գտնում 1698-1707 թուականներին:

«Աստուածամօր եօթ Վերքը» նկարի մասին առաջին վաւերական տեղեկութիւնները պահպանուել է Սիմեոն Ա. Երեւանցի կաթողիկոսի (1763-1780) «Դավթարում»: «Դաւթար եւ հաշուագիր անօթից եւ սպասուց սրբոյ եւ միածնակչի տաճարիս ... որ ի ՌՄՁէ (1768) բուց մերում» (Էջմիածին մատ. ձեռ. 124) մատեանի 1776 թուականի Օգոստոսի 10ին կազմած ցուցակում Մայր տաճարում եղած մեծ նկարների շարքում յիշատակուել է նաև այս գործը «Ս. պատկեր եւս, որ է Սուրբ Աստուածածին, Միածնն մեռեալ ի գիրկն, եւ եօթն սուր ի սիրտն»:

Բաւականին ինքնատիպ է նկարի յօրինուածքը: Այն կարելի է բաժանել բովանդակութեամբ իրար լրացնող եւ իրար շարունակութիւն կազմող մի քանի առանձին մասերի: Յօրինուածքի կենտրոնական մասում պատկերուած է Աստուածամայրը՝ Քրիստոսի անկենդան մարմինը գոգին: Այն կազմում է կտաւի կենտրոնական առանցքը եւ գրաւում նկարի մակերեսի մեծ մասը: Յօրինուածքն իրենից ներկայացնում է Միելանչելոյի հանրայայտ «Թկրմջ» (Ողբ) մարմարակերտ քանդակի ազատ ընդօրինակութիւնը: Ըստ երեւոյթին հայ նկարչի համար ներշնչանքի աղթիւր է հանդիսացել իտալական Վերածննդի մեծ վարպետի ստեղծագործութեան

փորագրութիւնը: Եթէ այս ենթադրութիւնը հիմք ընդունենք, պիտի նաև նշենք, որ մեր նկարը Միելանչելոյի քանդակի հայելային պատկերն է: Քանդակի յօրինուածքում Աստուածամօր ֆիգուրը ձախից դեպի աջ է թեքուած, նկարի վրայ հակառակ ուղղութեամբ: Եւ բացի այդ, Աստուածամօր ձեռքերի, Քրիստոսի մարմնի դիրքի, ինչպէս նաև հանդերձանքի մանրամասների մշակման մէջ նկատելի փոփոխութիւններ է կատարուած: Մահացած որդու վրայ ողբացող Աստուածամօր պատկերի դրամատիկ ներգործութիւնը աւելի ազդեցիկ դարձնելու նպատակով հայ նկարիչը հիմնական յօրինուածք է ներմուծել որոշ մանրամասներ: Դրանք են նկարի վերեւի հատուածի եօթ սրերը եւ Աստուածամօր ոտքերի մօտ գետնի վրայ թափուած Քրիստոսի չարչարանքի գործինները (փշէ պսակ, մուրճ, աֆցան գամեր):

Եօթ սրով խոցուած Աստուածամօր պատկերները բաւականին տարածուած են եղել թիւզանդական արուեստում, որի առաջին օրինակները ստեղծուել են 14րդ դարում: Այդ պատկերների գրաւոր հիմքը Աւետարանն է եւ վարդապետական գրականութիւնը, ըստ որի քարոզչութեան նանապարհին Քրիստոսին հասցուած ցաւերը խորհրդարանօրէն փոխանցուում են Աստուածամօրը, խորը Վերք բացելով նրա սրտում: Յայտնի են առանձին ուսումնասիրութիւններ, ուր բննուում են մեկնարաններում են այդ վերքերը: Յիշատակն է. Գարբիէլ վրդ. Աւետիմեանի «Խորհրդածութիւն ի վերայ եօթն գլխաւոր ցաւոցն սուրբ Աստուածածնին» 1810թ. Վենետիկում տպագրուած ուսումնասիրութիւնը: Աստուածածնի ցաւերը, ինչպէս նկատում է հեղինակը, ուրիշ մարտիրոսների պէս արտաքին, մարմնական ցաւեր չէին, այլ «ներքին ու մտքի ցաւ էր սրտին մէջ, ուստի պէտք է որ մտքով բննուին ու

սրտի կսկիծով ըլլայ ցաւակցութիւնը»: Այդ իսկ պատճառով քրիստոնէական արուեստում մտքով բննուի ու սրտով զգացուող ապրումի այս մեծ խորհուրդը Աստուածամօր պատկերագրութեան համակարգում մարմնաւորուել է նրա սիրտը խոցող եօթ սրերի պատկերով: Գ. Աւետիքեանի վերոյիշեալ աշխատութեան մեջ շարադրուած է այդ ցաւերի ընդունուած բաժանումը:

Առաջին ցաւը Սիմեոն ծերունու գուշակութեան առթիւ է, երբ բառասուն օրեկան մանուկ Յիսուս տանար տարան:

Երկրորդ ցաւը, երբ Հերովդէս թագաւորի ձեռքից փախան դէպի Եգիպտոս:

Երրորդ ցաւը, երբ տասներկու տարեկան Յիսուսը տանարում կորաւ:

Չորրորդ ցաւը, երբ Յիսուսին դատապարտեցին եւ խաչը ուսին, բարձրացաւ Գողգոթա Լեռը:

Հինգերորդ ցաւը, երբ Յիսուսին խաչեցին:

Վեցերորդ ցաւը, երբ Յիսուս հոգին աւանդեց ու կողը տէգով ծակեցին, մարմինը իշեցրին խաչից:

Եօթերորդ ցաւը, երբ Յիսուսը թաղուած փակուեց գերեզմանի մեջ:

Խնչպէս վերեւում նշեցինք, Աստուածամօր գլխի շուրջ պասկ կազմող սրերի ուղղութեամբ, եօթ ոչ մեծ շրջանակների մեջ առանձին պատկերներ կան: Նկարի գունաշերտի թափուած լինելու պատճառով այդ պատկերներն այժմ անվերծանելի են: Սակայն հաւանական է, որ շրջանակների պատկերները ներկայացնում են Աստուածամօր վերոյիշեալ գլխաւոր ցաւերը: Մեր ենթադրութիւնները հիմնում են քրիստոնէական արուեստում ընդունուած պատկերագրական այն սխեմաների վրայ, ուր կենտրոնում գլխաւոր սիւժեն է, նրա շուրջը զետեղուած առանձին շրջանակներում վերշինիս բովանդակութիւնը լրացնող մանրամասները: Որպէս բնորոշ

օրինակ նշենք 18րդ դարի անյայտ նկարչի «Գրիգոր Լուսաւորիչը մկրտում է Տրդատին, Աշխենին, արքայադուստր Խոսրովիդուխտին» նկարը: Կենտրոնում պատկերուած է Լուսաւորչի կողմից կատարուող մկրտութեան պահը, որի շուրջը տասնչորս շրջանակների մէջ նրա չարչարանքների առանձին դրուագներն են:

Իր բովանդակութեամբ առանձնանում է նաև «Աստուածամօր եօթ վերքը» նկարի ներքեւի մասում պատկերուած Քրիստոսի շարչարանքները խորհրդանշող առարկաների եւ խաչի պատկերումը: Այս մանրամասները բնորոշ են Աստուածամօր պատկերագրական «Զարչարանաց» կոչուող տիպին, քանի որ խորհրդանշում են Քրիստոսի գալիք շարչարանքները եւ Աստուածամօր անսփոր վիշտը: Սովորաբար Աստուածամայրը պատկերում է մանուկ Յիսուսի հետ, երբեմն մանկան ձեռքին խաչ է ինչպէս 18րդ դ. անյայտ նկարչի «Աստուածամայրը մանկան, Պօղոս եւ Պետրոս առաքեալների հետ» նկարում կամ էլ մանկան շուրջը շարչարանքի գործիքներ ինչպէս 17րդ դ. անյայտ նկարչի «Սեւանի Աստուածամայրը» նկարում: «Աստուածամօր եօթ վերքը» նկարի հեղինակը համարձակյացումով կարողացել է համատեղել Աստուածամօր պատկերագրական բոլոր այն տիպերը, որոնք վերաբերում են նրա հոգեկան տուայտանքներին ու ողբին:

Բաւականին ինքնատիպ է լուծուած յօրինուածքի առաջին հատուածների դասաւորութիւնն ու դրանց փոխադարձ կապը: Կտակի ուղղահայեաց առանցքին բարձրուղեց խաչափայտն է, աւարտում է չորրորդ սրի վերեւի տիրագումն յիշեցնող շրջանակով: Խաչից սկիզբ առնող երկու թեք գծերը (կենտրոնում պատկերուած է Աստուածամօր գլուխը) բացուելով իջնում են մինչեւ Աստուածամօր ձեռքերը: Նկարի

հորիզոնական առանցքին Քրիստոսի մարմինն է (ոտքերն ու ձեռքերը ներքեւ կախած) ու Աստուածամօր ոտքերը որոնք կազմում են ուղղանկիւնի: Եռամաս այս հատուածների ուրուագիծը ներառնում է եկեղեցու գմբերի մի պատկեր, որի ուղղանկիւն թմբուկի վրայ բարձրանում է կոնածեւ վեղարը և խաչին փոխարինող տիրագունդը: Հստ քրիստոնէական աշխարհայեցողութեան, Աստուածամայրը այլարանական իմաստով ներկայացնում է Եկեղեցին: Այս գաղափարի գեղանկար-

չական մարմնաւորումն իր արտայայտութիւնն է գույլ «Աստուածամօր եօր վերէլ» նկարում:

Այսպիսով, Հայաստանի Ազգային պատկերասրահում պահուող «Աստուածամօր եօր վերէլ» կտաւը 17րդ դարի հայ եկեղեցական գեղանկարչութեան առաւել ինքնատիպ ու խորախորհուրդ ստեղծագործութիւններից է:

ՔՆԱՐԻԿ ԱԽԵՏԻՄԵԱՆ  
Հայաստանի Ազգային պատկերասրահ

## ՊԱՏԱՍԽԱՆԸ

Կար մարդ մը, որ համարձակեցաւ կոչ ուղղել Աստուածոյ, ըսելով. «Ո՛վ Տէր Աստուած, Հրդեհէ՛ թուփը, ինչպէս որ ըրիր Մովսէսի համար, եւ ես պիտի հետեւիմ քեզի: Փուլ բեր պարխապները, ինչպէս որ ըրիր Ցեսուի համար եւ ես պիտի մարտնչիմ: Խաղաղեցուր կոհակները, ինչպէս որ ըրիր Գալիլիայի ծովուն վրայ, եւ ես մտիկ պիտի ընեմ քեզի»:

Եւ մարդը երկա՞ր, երկա՞ր դեղերեցաւ մացառուտին մէջ, նատեցաւ պարխապներու առջեւ ու մնաց ալեկոծ ծովի ափին, սպասելով, որ Աստուած պատասխանէ:

Իսկ Աստուած լսեց մարդուն կոչը ու պատասխանեց: Հրդեհ դրկեց՝ ո՛չ մացառներու թուփ մը այրելու, այլ մարդոց սրտերը հրաշրելու համար, փուլ բերաւ՝ ոչ թէ քարէ պարխապներ, այլ մեղքի ու անտարբերութեան պատեր, խաղաղեցուց՝ ոչ թէ ծովեր, այլ փոթորկայոց հոգիներ: Եւ սպասեց, որ մարդը պատասխանէ: Շատ երկա՞ր սպասեց:

Եւ որովհետեւ մարդը կը փնտուէր բոցավառող թուփեր՝ եւ ո՛չ սիրտեր, կը նայէր քարերու՝ եւ ո՛չ կեանքերու, կը դիտէր ծովեր՝ եւ ո՛չ հողիներ, եզրակացուց, թէ Աստուած անզօր է: Ուստի, վեր բարձրացուց զլուխը ու ըսաւ. «Ո՛վ Աստուած, միթէ կորսնցուցա՞ծ ես Քու ուժդ»:

Եւ Աստուած պատասխանէց. «Իսկ դո՞ւն, միթէ կորսնցուցա՞ծ ե՞ն տեսողութիւնդ»: